ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ «Երևանի հ. 87 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի **դաստիարակի (1,17 դրույք), երաժշտության դաստիարակի (0,25 դրույք), սոցիալական մանկավարժի (1 դրույք)** թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորում ու հարցազրույց: Թեստավորման փուլն անցկացվելու է ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի, իսկ հարցազրույցը՝ հաստատության կազմած հարցաշարով: Յուրաքանչյուր հայտատուի հետ հարցազրույցն անցկացվելու է առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել.

-դիմում (Ձև 1),

-մեկ լուսանկար 3x4 չափի,

-կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

-անձը հաստատող փաստաթուղթ,

-աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից կամ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

-ինքնակենսագրություն (Ձև 4),

-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

-ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

-հրապարակված հոդվածների ցուցակը կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

-որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի նշանակած լիազոր անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ ու վերադարձնում բնօրինակները: Եթե փաստաթղթերի ներկայացված փաթեթն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել թերությունները և համալրել փաթեթը:

Փաստաթղթերն ընդունվում են **2025թ. սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 24-ը ներառյալ**, ամեն օր՝ **ժամը 09:00-17:00-ը**, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2025թ. հոկտեմբերի 29-ին՝ ժամը 11:00-ին**, «Երևանի հ. 87 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում, հասցեն՝ ք. Երևան, Անդրանիկի 125/5:
Հեռախոս՝ 010 724051: